ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԱՒՆՕԴԻ ԿՈՂՄԻՑ։

Որովհետեւ «Արարատ» ամսագրի ոմանք գործակալ հայրերը, գլխաւորապէս գաւառներում, ստանալով իւրեանց անունով ամսէ ամիս համարները չեն բաժանում ստորագրողներին, չստացողների բողոքը կհասնի Էջմիածին։ Ուստի Սինոդս Վեհ. Կաթողիկոսի հրամանով կոչտուիրէ գործակալ հայրերին միայն ունենալ ստանալ եւ առանց յետաձգելու բաժանել «Արարատի» համարները բաժանորդներին ստանալուն պէս անմիջապէս, օրպէս զի պատասխանատուութեան չընթարկուին Վեհ. Կաթողիկոսի առաջ, բողոքների կրկնվելուց յետոյ։

ԾԱՆՈՒՑՈՒՄՆ։

«Արարատի» խմբագրութիւնս հարկաւոր կհամարի ծանուցանել ընթերցողներին, որ իւրաքանչիւր յօդուածի հեղինակը ազատ է գրել իւր սեփական ոճով, մեր գրողների ոճը շատ տարբեր լինելու պատճառով։ Խմբագրութիւնն իւր ոճը կգործածէ միայն իւր յօդուածների մէջ, որոնք կհրատարակվին ստորագրութեամբ կամ առանց ստորագրութեան եւ այն աշխատակիցների յօդուածների մէջ, որոնք այս մասին պիտի խնդրեն խմբագրութենից։